# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԱ-ԳՀԱՊՁԲ-25/62 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **29 սեպտեմբերի 2025թ.**

2025թ-ի սեպտեմբերի 23-29-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ լեդ լուսարձակների ձեռքբերման ԵԱ-ԳՀԱՊՁԲ-25/62 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Գ. Պողոսյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Ա. Գալստյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով չորս անդամները, բացակայում էր «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող Ս. Ավագյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. սեպտեմբերի 23-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Լամպ 2 կոնտակտ | 620,000.00 |
| 2 | Լամպ 1 կոնտակտ | 812,000.00 |
| 3 | Լամպ T4W | 165,000.00 |
| 4 | Լամպ R5W | 150,000.00 |
| 5 | Լամպ 1 կոնտակտ 12V դեղին ցոկոլ շեղ ոտ | 140,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԱ-ԳՀԱՊՁԲ-25/62 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

yeghiazaryanshin@gmail.com

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Մեգամարթ» ՍՊԸ | Ք. Երևան,Բաշ ինջաղյան 183 բն.33 | +374 94404260, +374 93260588 | megamart.llc@mail.ru | 01351516 |
| 2 | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | Ք. Երևան, Արտաշիսյա ն 44/4 բն.12 | +374 44989899 | imperiumplazahovhannes@gmail.com | 00515231 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ

«ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը փաստաթղթում բացակայում են ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը:

«ՄԵԳԱՄԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթղթում ներկայացված 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ինչպես նաև ներկայացված հայտը ստորագրված է այլ անձի կողմից, ում նման լիազորություններ վերապահված չեն:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Չափաբաժնի Անվանում | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լամպ 2 կոնտակտ | «Մեգամարթ» ՍՊԸ | 620,000.00 | 487,500.00 | 97,500.00 | 585,000.00 |
| | | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 516,660.00 | 103,332.00 | 619,992.00 |
| 2 | Լամպ 1 կոնտակտ | «Մեգամարթ» ՍՊԸ | 812,000.00 | 666,500.00 | 133,300.00 | 799,800.00 |
| | | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 676,660.00 | 135,332.00 | 811,992.00 |
| 3 | Լամպ T4W | «Մեգամարթ» ՍՊԸ | 165,000.00 | 123,750.00 | 24,750.00 | 148,500.00 |
| | | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 137,500.00 | 27,500.00 | 165,000.00 |
| 4 | Լամպ R5W | «Մեգամարթ» ՍՊԸ | 150,000.00 | 123,750.00 | 24,750.00 | 148,500.00 |
| | | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 125,000.00 | 25,000.00 | 150,000.00 |
| 5 | Լամպ 1 կոնտակտ 12V | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 140,000.00 | 116,660.00 | 23,332.00 | 139,992.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դեղին ցոգոլ շեղ ոտ | «Մեգամարթ» ՍՊԸ | | 123,750.00 | 24,750.00 | 148,500.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 29 ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Մեգամարթ» ՍՊԸ | բավարար |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |
| 2-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | բավարար |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |
| 3-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | բավարար |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |
| 4-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | բավարար |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |
| 5-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | բավարար |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Մեգամարթ» ՍՊԸ | X | 487,500.00 |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 516,660.00 |
| 2-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | X | 666,500.00 |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 676,660.00 |
| 3-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | X | 123,750.00 |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 137,500.00 |
| 4-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | X | 123,750.00 |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | | 125,000.00 |
| 5-րդ | «Մեգամարթ» ՍՊԸ | | 116,660.00 |
| | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 123,750.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատված:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել :
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Գ. Պողոսյան ____________

Ա. Գալստյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________